

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍԱՏ. «ԱՄՆ-Ի ԵՒ ԵՒՐՈՊԱՅԻ ՄԵԶ ՀՄԿԱՅ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿՈՒՂԵՆ ԲԱՐԱՔԱԿԱՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ՝ Ի ՆՊԱՍՏ ԻՐԵՆՅ՝ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՅԵՐՈՒՆ»

Սուրիոյ Նախագահ Պաշար ալ-Ասատ ընդունեց բանուորներու արհմիութիւններու համաշխարհային միութեան ընդհանուր քարտուղար Փամփես Խրետաթը:

Հանդիպումին ընթացքին Նախագահը շեշտեց, որ բանուորներու համաշխարհային միութիւններու դերակատարութիւնը անմիջական կապ ունի արդարութեան գաղափարին եւ անոր իրականացման հետ: Սոյն գաղափարէն մեկնելով, Սուրիոյ եւ բանուորներու արհմիութիւններու Համաշխարհային Միութեան յարաբերութիւնը հին է, սկիզբ առած է դրամատիրութեան եւ համաշխարհային ուժերուն միջեւ բախումէն:



Նախագահ Ասատ աւելցուց. «ԱՄՆ-ի եւ Եւրոպայի մէջ իսկապէս ընկերութիւններ կ'ուղղեն քաղաքական որոշումները: Անոնք նոյնիսկ պատերազմներ կը ստեղծեն ի նպաստ իրենց տնտեսական եւ ֆինանսական շահերու իրականացման: Պաղեստինեան հողերուն վրայ պատահածը փաստն է այս իրողութեան: Անոնք կ'ընդունին, որ Պաղեստինի մէջ անմեղ քաղաքացիներու ցեղասպանութիւն կատարուի՝ պարզապէս այն պատճառով որ պաղեստինցիները իրենց իրաւունքները կը պաշտպանեն»:

## ԿԱԶՄԱՅԻ ՏԵՂԵԿԱՏՈՒԿԱՆ ԳՐԱՏԵՆԵԱԿ. «ԱՄՐԿԱՅԻՆ ՕՐԷՆՔՆԵՐՈՒ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ԶՈՒՆԻ»

Կազգայի տեղեկատուական գրասենեակը հանդէս եկաւ հաղորդագրութեամբ, որուն մէջ շեշտեց, որ Իսրայէլ դիտումնաւոր ձեւով թիրախ կը դարձնէ քաղաքացիները, իսկ զինք քաջալերողը միջազգային հանրութեան լռութիւնն է:



Հաղորդագրութեան մէջ յիշուեցաւ նաեւ. «Կազգայի դէմ իսրայէլեան գրոհին առաջին օրուընէ իսկ Իսրայէլ ցեղասպանութիւն կը գործէ Պաղեստինի ժողովուրդին դէմ, որուն հետեւեալը 23. 000 նահատակ եւ վիրաւոր արձանագրուած է առայժմ»:

Իսրայէլի մղած ցեղասպանութիւնը կ'իրագործուի ամբողջ աշխարհին աչքերուն առջեւ: Այսօր 18-րդ օրն ըլլալով Կազգայի դէմ իսրայէլեան գրոհը կը շարունակուի եւ ձախողութեան կը մատնուին բոլոր դատապարտումները եւ յարձակումներուն դադրեցումը պահանջող կոչերը, ինչ որ կը փաստէ, որ մարդկային իրաւունքներու միջազգային օրինակաւորութիւնը, միջազգային մարդասիրական օրէնքներն ու այլ օրէնքներ եւ պայմանագրեր գոյութիւն չունին, այնքան ատեն, որ Պաղեստինի ժողովուրդը օրական ցեղասպանութեան կ'ենթարկուի:

## ՍԱՏՈՒԷԼ ՀԱՅՐԱՄԱՆԵԱՆ. «ԱՐՅԱՍԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ ԶԵ ԼՈՒՏԱՐՈՒԱԾ»

Արցախի Նախագահ Սամուէլ Շահրամանեան քաղաքացիներուն հետ հանդիպումին ընթացքին յայտարարեց. «Մենք բոլորս ալ շատ դժուար վիճակի մէջ ենք, ծայրայեղ ծանր վիճակի մէջ ենք, հիմա ինչ որ կը կատարուի այստեղ, աւելի կը ծանրացնէ մեր վիճակը: Ես կ'ուզեմ բոլորը վստահեցնել՝ այստեղ ես թըշ-



Շար.՝ Էջ 2

## ՀԱՂՐԱԳՐՈՒԹԻՒՆ՝ ՀՕՄ-Ի ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ 73-ՐԴ ՊԱՏՈՒՄԱՒՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ

Հայ Օգնութեան Միութեան Համահայկական 73-րդ Պատգամաւորական ժողովը տեղի ունեցաւ 16-20 Հոկտեմբեր 2023-ին, Հայաստան:



Ժողովին մասնակցեցան միութեան 12 շրջաններէն 11 շրջաններ, 41 պատգամաւորներ, 16 մեկուսիներ 10 պատգամաւորներ, ՀՕՄ-ի Կեդրոնական վարչութեան ընթացաւարտ կազմը՝ 11 անդամներ, 11 հիւրեր՝ Արցախէն եւ շրջաններէն, ՀՀ Բիւրոյի անդամ Րաֆֆի Տոնապետեան եւ Հա-

դիան ՀՕՄ-ի համահայկական 73-րդ պատգամաւորական ժողովի  
Շար.՝ Էջ 5

## ՀԱԼԷՊԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԵՆ ՆԵՐՄ՝ «ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՐԱԹ»

Հովանաւորութեամբ Հալէպի Համալսարանի «Պաաս» Կուսակցութեան գլխաւոր քարտուղար դոկտ. Իպրահիմ Հատիտի, օրինութեամբ Բերիոյ Հա-



ժամը 12:00-ին տեղի ունեցաւ «Հայկական Մշակութային Շաբթուան» ցուցահանդէսի բացումը Հալէպի պետական համալսարանի Ապու Պաքր ալ-

Մերի Մանուկեան  
Շար.՝ Էջ 12

## Տեղական Լրագրող

### Խմբագրական

### ԹՈՒՐԵՒԱՆ ԼԱՐԱԽԱՂԱՅ՝ ՊԱՂԵՍՏԻՆԻ ՏԱԳՆԱՊԻՆ ՄԷՋ

Թուրքիան ընդհանրապես սերտ յարաբերություններ ունեցած է պաղեստինեան ու սուրիական հողեր գրաւած Իսրայէլի հետ: Հակառակ անոր որ մերժած է ՄԱԿ-ի 1947-ի տարածքներու բաժանումին առնչուող բանաձեւը, մէկ տարի վերջ՝ 1948-ին պաշտօնապես ճանչցած է Իսրայէլի գոյաւորումը:

Ու թէև այդ յարաբերությունները վերջին երկու տասնամեակներու ընթացքին ենթարկուած են լուրջ վերիվայրումներու, սակայն Թուրքիան երկար ժամանակի վրայ չէ խզած իր յարաբերությունները Իսրայէլի հետ:

Արցախի դեմ Ատրպէյճանի մղած պատերազմին ընթացքին Թուրքիան ուղղակի կողմ դարձաւ ու Ատրպէյճանին տրամադրեց ոչ միայն զէնք ու զինամթերք, այլև ծանր հրետանի, սպայակազմ եւ մասամբ նորին: Ատրպէյճանին զինուորական օժանդակութեան կողքին, Թուրքիան քաղաքական գետնի վրայ եւս նեցուկ կանգնեցաւ անոր ու յաւելեալ ճնշում բանեցուց Հայաստանի վրայ, յաւելեալ զիջումներ խլելու անկէ:

Պաղեստինի պարագային նոյնը չեղաւ սակայն: Թուրքիան մէկ կողմէ պաղեստինեան եւ արաբական հանրութեան ցոյց տուաւ որ կը դատապարտէ Իսրայէլն ու անոր յարձակումները, միւս կողմէ սակայն ոչ թէ զօրավիզ կանգնեցաւ պաղեստինեան դիմադրութեան, այլ՝ նախընտրեց միջնորդի դերը յանձն առնել, հրապարակային ելոյթներով Իսրայէլը դատապարտել պարզապէս ու զինադադարի կամ ճանապարհային քարտեզի իր տարբերակը առաջարկել որպէս միջնորդ, պաղեստինցիներուն մարդասիրական օժանդակութիւն առաքելու պատրաստակամութեան կողքին:

Պաղեստինեան պատերազմի այլազան փուլերուն երեւելի դարձած է Թուրքիա-Իսրայէլ յարաբերություններու պահպանման կարմիր գիծը:

Միւս կողմէ, Սուրիոյ պատերազմի տարիներուն, Թուրքիան գործակցեցաւ Սուրիոյ իշխանութիւնները տապալել փորձող զինեալ ահաբեկչական խմբաւորումներու հետ, անոնց զօրավիզ կանգնեցաւ զէնքով ու զինամթերքով, այնպէս ինչպէս Ատրպէյճանին՝ Արցախի պատերազմի օրերուն, ու սուրիական տարածքներ գրաւեց՝ յագուրդ տալով ծաւալապաշտական իր նկրտումներուն:

Պաղեստինեան հարցին մէջ, Թուրքիան վերահաստատելով լարախաղացի իր դերակատարութիւնը փաստօրէն կը փորձէ ոչ թէ նեցուկ կանգնիլ Պաղեստինի ժողովուրդին, անոր դիմադրական շարժումին, այլ՝ պատերազմող կողմերուն միջեւ միջնորդի դեր խաղալով հակակշռել Իրանի եւ այլ արաբական երկիրներու ազդեցութիւնը տարածաշրջանին մէջ:

«Գ.»

-Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2023-ի կեսօրուան ժամը 13:25-ին, Իսրայէլ Միջերկրական ծովուն Լաթաքիոյ շրջանի արեւմուտքէն օդային յարձակում մը գործեց Հալէպի միջազգային օդակայանին ուղղութեամբ, որուն հետեւանքով օդակայանի վայրէջքի բաժինը վնասուեցաւ եւ օդակայանը անգամ մը եւս ծառայութենէ դուրս եկաւ:



-Չորեքշաբթի, 25 Հոկտեմբեր 2023-ի կես գիշերուան ժամը 1:45-ին, Իսրայէլ Կոլանէն օդային յարձակում մը գործեց Տարաաի արուարձանի զինուորական կեդրոններուն վրայ:



Յարձակումին հետեւանքով նիթական վնասներ արձանագրուեցան, 8 զինուոր սահառակուեցաւ, իսկ 7 ուրիշներ վիրաւորուեցան:

-Սուրիոյ նախագահ Պաշար ալ-Ասատ Չեխիոյ Հանրապետութեան դեսպանուհի Եւա Ֆիլիպիի պաշտօնավարութեան շրջանի աւարտին առիթով գերագանց վաստակի սուրիական շքանշան նուիրեց, որպէս գնահատանք անոր սուրիական աշխատանքին եւ սուրիական-չեխական յարաբերութեան զարգացման եւ բարգաւաճման գծով ունեցած դերակատարութեան:



Նախարարութեան յարկէն ներս տեղի ունեցած ողջերթի հանդիսութեան ընթացքին, Ֆիլիպիի շքանշանը անցուց Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ:

-Միջազգային Անվտանգութեան Խորհուրդին «Միջին Արեւելքի Իրավիճակը» վերնագիրը կողմ նախարարական ժողովին ընթացքին Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատին հաղորդագրութիւնը արտասանեց երեսփոխանական աշխատանքներու բանբեր դոկտ. ալ-Հաքամ Տանտի:



Հաղորդագրութեան մէջ նախարար Մըքտատ ըսած էր. «Իսրայէլի գործած կազգայի ժողովուրդին ցեղասպանութիւնը չէր իրականանար առանց արեւմտեան երկիրներու, յատկապէս ԱՄՆ-ի արտօնութեան եւ աջակցութեան», շեշտելով, որ Միջազգային Ապահովութեան Խորհուրդը պէտք է այս ոճիրներու դարձեցման պատասխանատուութիւնը կրէ, անկախ քաղաքական շահերէ եւ երկդիմի քաղաքականութենէ:

-Սեւտական Արաբիոյ եւ Սուրիոյ արտաքին գործոց նախարարները հեռաձայնային հաղորդակցութեամբ խորհրդակցեցան Պաղեստինի ժողովուրդին աջակցութեան նպաստող եւ տարածաշրջանի լարուածութիւնը մեղմացնող արդար լուծումի մը հասնելու միջոցներուն շուրջ:



### ՍԱՍՈՒԷԼ ԸՆԴՐԱՄԱՆԵԱՆ...

#### Սկիզբ՝ էջ 1

Նամի չունիմ, մեր թշնամին մէկ է: Ես պատասխանատու եմ իմ բոլոր քայլերուն համար՝ ձեր ու ձեր ընտանիքներուն առջեւ: Մենք հայրենիք մը եւս ունինք, աստիկա 33-ն է, ու մենք 33-ի ճակատագիրը վտանգելու իրաւունք չունինք: Պատրաստ եմ հանդիպիլ բոլորիդ հետ քննարկելու այն հարցերը, որոնց համար դուք գիտ կը մեղադրեք, ինչ հարցեր որ կ'ուղղէք»:

Արցախցիներէն մէկը հարցում ուղղեց, թէ ինչո՞ւ Արցախի Ազգային Ժողովը նիստի չի հրաւիրեր՝ Արցախի լուծարման որոշումը բեկանելու համար, որուն ի պատասխան Սամուէլ Շահրամանեան ըսաւ, որ Արցախի Հանրապետութիւնը չէ լուծարուած:

«Մարդ կա՞յ, որ տեսած է այդ փաստաթուղթը, ծանօթ էք այդ փաստաթուղթին: Այդ փաստաթուղթին առնչուող ահագին հարցեր կան, գորս ես այստեղ չեմ կրնար ըսել: Ես ձեզ կը վստահեցնեմ, որ տեղեկ ենք այս փաստաթուղթին ե՛ւ դրական, ե՛ւ բացասական կողմերուն: Ոչ մէկ փաստաթուղթով կրնայ լուծարուիլ ժողովուրդին կողմէն ստեղծուած հանրապետութիւնը: Ասոր պատասխանը կու տամ հանրային ձեռով՝ 31-ի տաղաւարին մէջ», ըսաւ ան:

Շահրամանեան աւելցուց, որ ոչ մէկուն մօտ պէտք է կասկած յառաջանայ. «Եթէ իմանայինք, որ կրնանք յաղթել այդ զինուորական գործողութիւններուն, մենք միևնույն վերջ կուրելէ չէինք կանգնել: Մենք ինչպէս ենք մեր տղաքը, քաղաքացիական բնակչութեան կեանքը, եթէ ժամ մը առաջ չկանգնեցնէինք պատերազմը, կը մտնէին քաղաք, կին, երեխայ կը մորթէին»:







## Թուրքիոյ նուրջ

### ԸՆԹԱՅԸ ԱՌԱՏ ԵՆ ԱՏՐՊԷՅՃԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԷՒՈՅ ՄԻԱՅԵԱԼ ՌԱԶՄԱԾՈՐՉԵՐԸ. ԱՆՈՆՔ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՆՊԱՔՈՒԻ, ՆԱԽԻՉԵԱՆԻ ԵՒ ԲՈՆԱԳՐԱԽՈՒՄ ԱՐՅԱՆԻ ՄԵՉ

«Թերթ» կը յայտնէ, որ օրերս ընթացք առած են Ատրպեյճանի եւ Թուրքիոյ զինեալ ուժերու «Մուսթաֆա Զեմալ Աթաթուրք 2023» միացեալ մարտավարական ռազմափորձերը, որոնք պիտի իրականանան տարբեր ուղղութիւններով՝ Ատրպեյճանի մայրաքաղաք Պաքուի, Նախիջեւանի Ինքնավար Հանրապետութեան եւ բռնագրաւուած Արցախի տարածքներուն վրայ:

Ատրպեյճանի Պաշտպանութեան Նախարարութիւնը յայտնած է, որ ռազմափորձերուն մէջ ներգրաւուած են երկու երկիրներու այլազան բնոյթի զօրքերու՝ ընդհանուր առմամբ մինչեւ 3 հազար հոգի հոգի հոգ անձնակազմ, 130 միաւոր զինամթերք, 100 հրետանային զինատեսակ, աւելի քան 20 օդանաւ եւ ուղղաթիւ, ինչպէս նաեւ երկրաչափական սարքեր:

Ռազմափորձերու ընթացքին կեդրոնացումը պիտի ըլլայ զօրքերու փոխգործակցութեան մարտական համակարգումի ապահովման վրայ: Ծրագիրը պիտի տեւ մինչեւ 25 Հոկտեմբեր:

### ՄԻՐՉՈՅԵԱՆ ԹԵՂՐԱՆԻ ՄԵՉ ՀԱՆԴՊՈՒՄ ՈՒՆԵՅԱՍԵ ԵՒ ԹՈՒՐԷՒՈՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐԻՆ ՇԵՏ

23 Հոկտեմբերին Թեղրանի մէջ տարածաշրջանային խորհրդակցական հարթակի («3+3») հանդիպման շրջագիծէն ներս տեղի ունեցած է ՀՀ արտաքին գործոց նախարար Արարատ Միրզոյեանի եւ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Հաքան Ֆիտանի հանդիպումը:



Ըննարկուած են ընթացիկ տարածաշրջանային եւ երկկողմ օրակարգային հարցեր:

Վերահաստատուած է Նախապէս տեղի ունեցած համաձայնութիւնները կեանքի կոչելու պատրաստակամութիւնը:

### «3+3» ԶԵԽՉԱԾՈՎ ՅԱՅՈՐԳ ՀԱՆԴՊՈՒՄԸ ՏԵՂԻ ԿՈՒՆԵՆԱՅ ԹՈՒՐԷՒՈՅ ՄԵՉ

Իրանի մայրաքաղաք Թեղրանի մէջ տեղի ունեցած «3+3» տարածաշրջանային խորհրդատուական հարթակի հանդիպման ներկայ գտնուած են Իրանի, Ռուսիոյ, Հայաստանի, Թուրքիոյ եւ Ատրպեյճանի արտաքին գործոց նախարարները: Հանդիպման չէ մասնակցած Վրաստանը եւ յիշուած է,



որ հետագայ հանդիպումները բաց են Վրաստանի մասնակցութեան համար: Հանդիպումէն ետք իրապարակուած է միացեալ յայտարարութիւն եւ որոշուած է յառաջիկայ հանդիպումը իրականացնել Թուրքիոյ մէջ:

### ՆՍՕՏՏ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՆԱԽԱԳԱՅՈՒԹԵԱՄԲ ԱՐՑԱԽԵԱՆ ՀԱՐՑԻՆ ՅԱՏԿԱՑՈՒՄԸ ՆԻՍՏԵՐ

ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին Նախածեռնութեամբ, յաջորդական երկու հեռավար նիստեր տեղի ունեցան՝ արցախեան Նոր իրավիճակին լոյսին տակ իրադարձութիւններուն ընդհանուր գնահատականը կատարելու եւ յառաջիկայ աշխատանքներուն ուղենիշերը ճշդելու նպատակով:

Նիստերուն կը մասնակցին Հայաստանէն, Արցախէն, Միացեալ Նահանգներէն, Եւրոպայէն, Հարաւային Ամերիկայէն եւ Միջին Արեւելքէն պատմաբաններ, միջազգային իրաւունքի մասնագէտներ եւ քաղաքագէտներ. - Աշոտ Մելքոնեան, Ռուբէն Սաֆրաստեան, Արմէն Մարուքեան, Վահրամ Բալայեան, Վիգէն Զօրթեան, Սիմոն Փայասլեան, Վահրամ Շամմասեան, Խաչիկ Տէր Ղուկասեան, Նորա Պայրազտարեան, Շահան Գանտահարեան եւ խորհրդակցական նիստերու քարտուղար Ահարոն Շիրտըմեան:

Առաջին նիստը կայացաւ Հինգշաբթի, 12 Հոկտեմբեր 2023-ին, Պէյրուի ժամով 19:00-ին. իսկ երկրորդը՝ Ուրբաթ, 20 Հոկտեմբերին, ժամը 20:00-ին:

Առաջին նիստը յատկացուած էր արցախեան իրադարձութիւններու պատճառահետեւանքային կացութիւններուն: Ըննարկումներուն ներառուած են. -



ա) Տարածաշրջանային իրադարձութիւններ եւ աշխարհաքաղաքակա- նութիւն,

բ) Բռնատեղահանուածներու իրավիճակ եւ տարբեր պետութիւններու մօտեցումներ եւ մարդասիրական օժանդակութիւններ,

գ) Ռազմագերիներու ու պետական անձնաւորութիւններու ազատ արձակման պահանջներու իրաւական հիմունքներ,

դ) Արցախի ժողովուրդին վերադարձի իրաւունք՝ պայմանաւորուած անվտանգութեան երաշխիքներով եւ իրաւունքներու պաշտպանութեամբ

ե) Կրօնական-մշակութային ժառանգութեան իրավիճակ. պատմութեան նենգափոխում:

Երկրորդ նիստը կեդրոնացաւ իրավիճակի յաղթահարման որդեգրելի իրաւական հնարաւոր ուղիներուն վրայ:

Երրորդ նիստին օրակարգի առանցքը պիտի ըլլայ, աշխարհաքաղաքական Նորագոյն իրադարձութիւններու լոյսին տակ, հայկական կողմի յետագայ աշխատանքային ուղիներու քննարկումը:

Ակադեմական-մասնագիտական բնոյթի քննարկումի իւրաքանչիւր նիստի աւարտին, Վեհափառ Հայրապետը կ'ամփոփէ առաջարկուած գործողութիւններու կետերը, որոնք պիտի համալրուին հեռավար խորհրդակցութիւններու յառաջիկայ նիստերով եւ պիտի իրապարակուին, յատկապէս իբրեւ աշխատանքային ուղի առաջարկող վերլուծականներով:

Նշենք, որ համահայկական օրակարգի տարողութիւն ունեցող այս իրատապ թեմաներու քննարկումներուն համար, Վեհափառ Հայրապետին Նախածեռնութեամբ այս ձեւով կը գործէ մասնագիտական հարթակ մը, որուն ներառուած են Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն փորձագիտական մարդուժի ներկայացուցիչները:

Երրորդ նիստը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 30 Հոկտեմբեր 2023-ին:

Երբայ ի՞նչ երկիրի  
հարթեմք...

Radio Yeraz

www.radioyeraz.com

Պրիմալկտ

ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ




Մարուշ Երամեան

Կը յիշէ՞ք այն օրը, երբ Թալիպան Աֆղանիստան մտաւ եւ իր առաջին գործերէն մէկը եղաւ պայթեցնել Պամիյան շրջանի երկու Պուտտաներուն հսկայ արձանները, փոքրը՝ 38 մ., իսկ մեծը՝ 55 մ., որոնք 6-րդ դարէն կու գային:

Մայրաքաղաք Գապուլէն 130 քմ. հեռու, 2500 մ. բարձրութեան վրայ, ժայռերուն մէջ կառուցուած այս Պուտտաները որո՞ւ ուսերուն նստեր էին, որո՞ւ նեղացուցեր էին, որ պէտք էր գանոնք պայթեցնել, կարճ պահուան մը մէջ սրբելով դարերու պատմութիւնը:

Պուտտիստներու համար սրբատեղի համարուող այս արձանները Մետաքսի ճամբուն վրայ կը գտնուէին:

Թալիպանի հիմնադիրներէն Մոլլա Օմարի հրամանով ... 2001 թուականին ...



Բայց ո՞վ էր Մոլլա Օմար, որ արձանները քանդելու այդ որոշումը առեր էր: Այդ որոշումը ի՞րն էր, թէ՞ ինք հրամաններ կը գործադրէր միայն:

Այդ օրերուն ամբողջ աշխարհը դատապարտեց Թալիպանը, հակամշակութային այս արարքին համար: Բայց ո՞ր էր «ամբողջ աշխարհը» այդ քանդումէն առաջ, եւ ինչո՞ւ չկրցաւ առաջը առնել այդ բարբարոսութեան:

Ասիական առաջին դէպքն էր կեանքիս ընթացքին, երբ մարդիկ դիտում-նաւոր կերպով կը քանդէին արուեստի գործ մը, հնութիւն մը. հասկնալի չէր, որովհետեւ մեր մանկութենէն սորվեր էինք, որ արուեստն ու մշակոյթը շատ կարեւոր բաղադրիչներ են, որոնք մարդը անասունի աստիճանէն կը հանեն վեր, ասունի աստիճանին:

Յետոյ վրայ հասաւ նոր Ձուղայի խաչքարերու քանդումը 2005 թուականին, թէւ շատ անելի վաղ՝ 1998 թուականէն սկստել էր խաչքարերու ջարդը: Այդ խաչքարերը, Պամիյանի Պուտտաներուն նման, ԻւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգութեան ցանկին մաս կը կազմէին, եւ ճիշդ նոյն կեցուածքով աշխարհը դատապարտեց, բայց ոչինչ կրցաւ ընել, կամ ուզեց ընել, հակառակ անոր, որ Հայաստանի պետութիւնը քանիցս դիմած է ԻւՆԵՍԿՕ-ին եւ զգուշացուցած գային:

ԻւՆԵՍԿՕ-ն՝ Միացեալ Ազգերու կրթութեան, գիտութեան եւ մշակոյթի կազմակերպութիւնը, ստեղծուել է 16 Նոյեմբեր 1945-ին:

Համաշխարհային ժառանգութիւն (World Heritage) բաժինը մաս կը կազմէ ԻւՆԵՍԿՕ-ին, որպէս ենթաբաժանում, եւ կը զբաղի բնութեան ու մարդուն կողմէ ստեղծուած մշակութային արժէքներու պահպանումով:

Եւ որպէսզի անաչառ ըլլայ նման վայրերու ընտրութիւնը, Համաշխարհային ժառանգութիւնը վեց կէտերէ բաղկացած չափանիշներու ցանկ մը հրատարակած է, հետեւեալ ձեւով.

I. Մարդկային ստեղծագործութեան գլուխ գործոց մը պէտք է ըլլայ ներկայացուած հնավայրը.

II. Հնավայրը պէտք է հաստատուէ մարդկային արժէքներ, եւ անոնց տուեալ ժամանակահատուածին մէջ, կամ մշակութային որոշ բնագաւառի մը՝ ճարտարապետութեան, գիտարուեստի, կամ ճարտարագիտութեան փոխադարձ ազդեցութիւնը հաստատուէ:

III. Հնավայր մը, որ եզակի է կամ առնուազն բացառիկ՝ մշակութային աննորոյթի կամ քաղաքակրթութեան համար, որ գոյութիւն ունի մինչեւ այսօր կամ արդէն անհետացեր է (եթէ անհետացեր է, ինչպէ՞ս պաշտպանել ... Մ. Ե.):

IV. Հնավայր մը, որ կառուցումի, ճարտարապետական, գիտարուես-

տական, կամ ճարտարագիտական համալիրի մը, կամ բնավայրի մը ակնառու օրինակ է եւ կը ներկայացնէ մարդկային պատմութենէն կարեւոր շրջան մը:

V. Հնավայր, որ մարդկային կառուցումի ակնառու օրինակ է, հողի եւ ծովու աննորոյթ օգտագործումով, մշակոյթը, կամ մշակոյթները շրջապատող միջավայրին հետ մարդկային փոխարաբերութիւններու օրինակ, յատկապէս եթէ բնութիւնը դարձեր է խոցելի ու անշոջելի, փոփոխութիւններու ուժեղ ազդեցութեան պատճառով:

VI. Հնավայր, որ ուղղակիօրէն կամ մասամբ կապուած է իրադարձութիւններու կամ գոյութիւն ունեցող աննորոյթներու, գաղափարներու, համոզումներու, գրականութեան ու գեղարուեստի հետ եւ ունի համամարդկային նշանակութիւն:

(Ըստ ԻւՆԵՍԿՕ-ի կոմիտէի կարծիքին, այս վերջին չափանիշը նախընտրելի է օգտագործել այլ չափանիշներու հետ):

Այսօր մենք մեզ կը գտնենք զգետնուած, ոչ միայն Արցախը կորսնցուցած ըլլալու իրողութեան ցաւին տակ, այլեւ Արցախի մաս կազմող անհամար հնագիտական վայրերուն եւ կառոյցներուն անորոշ կամ դժիւմ ճակատագիրով:

Ի՞նչ կրնանք ընել այս պարագային, ի՞նչ պէտք է ընել, որովհետեւ ՊԵՏԸ է բան մը ընել, թէւ հայաստանցիներէն շատ անելի ծանօթ ըլլալով թուրքին թրքութեան (սփիւռքահայերն ու Արցախի ժողովուրդը շատ լաւ գիտեն ասիկա, վերջինները՝ առաջին ձեռքէ), շատ կը կասկածիմ, որ ԻւՆԵՍԿՕ-ն կարենայ բան մը ընել: ՄԱԿ-ը ի՞նչ կրցաւ ընել, որ իր ենթաբաժանումը՝ «Համաշխարհային ժառանգութիւն»-ը կարենայ բան մը ընել:

Բոլորս ալ գիտենք (կամ չենք գիտեր), տեսեր ենք ու կարդացեր կամ ոչ, այն բազմաթիւ հատորներն ու պատկերագիրքերը, որոնք լոյս կը սփռեն Արցախի ճարտարապետական կրթողներուն վրայ, որոնք մէ մաս մը ներկայացուած է – թէւ բոլորը պէ՛տք է մաս կազմեն – ԻւՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգութեան 1199 անուններուն, որոնց 48-ը անդրահամայնային են (Transboundary), 3-ը՝ ցանկէն հանուած (չ'ըսուիր թէ ինչո՞ւ), 56-ը՝ վտանգի մէջ, 933-ը՝ մշակութային (միւսները ի՞նչ են ...), 227-ը՝ բնութեան մաս կազմող եւ այլն:

Աշխարհի բոլոր մեծ ճարտարապետներն ու ճարտարապետութեան պատմութեան մասնագետները միաձայնութեամբ համաձայն են, որ հայկական ճարտարապետութեան, մանաւանդ եկեղեցիներուն ոճը խիստ ինքնուրոյն է, եւ կ'ընդունին այդ ճարտարապետութեան ազդեցութիւնը այլ ճարտարապետական ոճերու վրայ:

Այս բոլորը գիտականօրէն հաստատուած են եւ կարելիին չափ տարածուած միջազգային մամուլին մէջ:

Բայց կը շարունակուի քաղաքական «խաղը», ըսելու համար, որ Արցախը ատրպէյճանական տարածք է. եթէ այդպէս է, ինչպէ՞ս բացատրել եկեղեցիներուն եւ վանքերուն գոյութիւնը, անոնց այդքան մեծ թիւը Արցախի մէջ: Իրանը միակ ներդրամիտ իսլամական երկիրն է, ուր հայկական եկեղեցիներն ու վանքերը պետութեան ուշադրութեան առարկաներն են: Այնտեղ երբե՞ք կասկածի տակ չ'առնուիր այդ կառոյցներուն պատկանելիութիւնը, երբե՞ք չի ժխտուիր անոնց ծագումը:

Աշխարհը շատ լաւ գիտէ այս իրողութիւնը, բայց անշուշտ անգիտաւնալ կը ձեւանայ:

Եւ կրկին, քրեորոյց անգամ մենք, մեր պատմութիւնն ու մեր համաշխարհային ժառանգութիւնը կ'իյնանք քաղաքական այնպիսի մեծ խաղի մը մէջ, որ բոլորովին կապ չունի մշակոյթի թէ արուեստի հետ:

Հիմա հարցը այստեղ շատ անելի ծանր է, քան Արցախի բոլոր կառոյցներուն Համաշխարհային ժառանգութեան մաս կազմել-չկազմելը՝ անոնց գոյութեան ապահով շարունակութիւնը:

Կ'ըսեն թէ միայն իրենք գիրենք չհաստատած անձերն են – երեւան եկաւ, որ ազգերն ալ այդպէս կրնան ըլլալ – որ կ'ուրանան դիմացիին շնորհները, կը փորձեն անտեսել, ապա չեզոքացնել զանոնք:

Պիտի կարենա՞նք տոկալ ու դիմանալ, երբ ...

Չեմ իսկ ուզեր պատկերացնել Արցախի եկեղեցիներուն եւ վանքերուն դժիւմ ապագան:

Անցեալները մէկը հարց կու տար՝ «Հո՞ղը թէ մարդը», ըսել ուզելով ո՞րը նախընտրելի է փրկել:

Անշուշտ հարցումը շատ հռետորական է. բայց մտածել կու տայ:

Եթէ իրապէ՛ս երկիր ենք, եթէ իրապէ՛ս երկրին մասին մտածող եւ անոր շահերուն համար աշխատող պետութիւն ունինք, եթէ իրապէ՛ս դեռ կը շարունակենք ազգ ըլլալ, մեզի համար պատասխանը միանշանակ մէկ է.

Հո՞ղը, անոր վրայ ապրող մա՛րդը եւ այդ մարդուն պատմութիւնը հաստատող բոլոր՝ կրթողներն ու հնավայրերը:

Ուրիշ նպատակ չենք կրնար ունենալ:

Բայց կը մնայ գլխաւորը՝ եթէ ...

www.kantsasar.com

## ՀԵՐԻՔ Է... ԽՕՍՔԷՆ ԳՈՐԾԻ ԱՆՑՆԻՆՔ



Սազո Խաչատրյան

Պատերազմ, մահ, կռիւ ամենուր: Յաւ, լաց ու նեղութիւն ամէն ծայր: Այս անգամ, սակայն, մեր միտքը չարչրկող հիմնական հարցումը պիտի ըլլայ ոչ թէ «ինչո՞ւ»-ն, այլ «մինչեւ ե՞րբ»-ը: Որքա՞ն արիւն պետք է տակաւին, որքա՞ն գէնքի վաճառք պետք է, որքա՞ն գոհ պետք է «աթոռը» պահելու համար: Ո՞վ պիտի մխիթարէ նահատակին մայրը, ո՞վ պիտի զգայ կնոջ ցաւը, ո՞վ պիտի սրբէ զաւակին արցունքը: Ո՞վ կը յանդգնի հարց տալ մօր, թէ ինչո՞ւ զաւակը յանձնեց հողին: Ո՞վ կը յանդգնի հարց տալ ողբացող կնոջ, թէ ինչո՞ւ ամուսինը գերեզարուած է թշնամիին կողմէ: Ո՞վ կը յանդգնի հարց տալ պատանհին, թէ ե՞րբ պիտի կարենայ տեսնել իր հայրը:

Փաստօրէն գրիչի մը արձանագրութեամբ բոլոր գոհողութիւնները կը դառնան ափսոսանք: Համաձայնութեան մը հետեւանքով երիտասարդութեան բոլոր սխրանքները կը ջնջուին անձայն, կը կորսուին անհետ: Կարծեք բան չէ պատահած. ու բոլորը կը շարունակեն իրենց առօրեան... Սակայն մայրը կը շարունակէ սպասել իր զաւակին վերադարձին, կնոջ աչքերը կը մնան ճանապարհին, եւ այդ մանուկը կարօտով կը սպասէ իր հօրը:

Պատերազմ ամենուրեք, սակայն կարգ մը պատերազմներ նուազագոյն ուշադրութեան ու դատապարտումի կ'արժանանան, ուրիշներ՝ աշխարհը ոտքի կը հանեն: Արդեօ՞ք պատերազմներուն տարածքն ու վայրն ալ դեր կը խաղան տարբեր երկիրներու արձագանգին տարողութեան ու բողոքի ծաւալին մէջ:



Կ'ապրինք այնպիսի դարու մը մէջ, ուր աշխարհը դարձած է փոքրիկ գիւղ մը, եւ ամէն վայրկեան կրնաս իմանալ ամէն բանի մասին: Ուրեմն հարցը լուրին սրընթաց տարածուելու կարելիութիւնը չէ, այլ մեր միասնական բողոքի եւ Արցախի արդարացի պայքարը համաշխարհային լուսարձակի տակ բերելու ուշացումը... Թէեւ քաջ գիտենք, որ բերանացի բողոքներն ու դատապարտումները ոչ մէկ օգուտ բերած են, ոչ ալ պիտի բերեն մեզի: Պարզապէս պետք է ցոյց տալ աշխարհին հայկական կողմն աշխարհի՝ Արցախի մէջ, տեղի ունեցող մարդկային թէ մշակութային սրբապղծութիւնները՝ զեթ գործի լծելու մշակութային եւ մարդասիրական կազմակերպութիւնները եւ անոնց բոլորին հայեացքը ուղղելու նաեւ դէպի Արցախ: Ամէն պարագայի շատ կրկնեցինք «օտարէն մեզ ֆայտա չկայ» խօսքը, ուստի մեր հարցերուն լուծումները չփնտռենք Արեւելքի կամ Արեւմուտքի մէջ:

Այդ խօսքին խորքը չըմբռնեցինք, սակայն, ու նոյն սխալները կրկնեցինք՝ մեր յոյսը դնելով այս թէ այն կողմին, դաշնակիցին վրայ:

Աւարտին ամէնէն դիւրին բանը պիտի ըլլայ ցուցամատը ուղղել այս կամ այն կողմին՝ յանցաւոր փնտռելու համար: Փոխանակ գոհի մնայուն կերպարին մէջ մնալու, ուրեմն, ոտքի ելլենք ու միասնաբար պայքարինք:

Պատմութիւնը եթէ բան մը կ'ըսէ խաղաղութեան մասին, պարզապէս կը հաստատէ որ խաղաղութիւնը կը պարտադրուի եւ չի խնդրուիր: Հողեր տալով խաղաղութիւն չես հաստատեր, եղբայր, այլ պարզապէս թշնամիին ախորժակը կը սրես: Օրինակները շատ են...:

«Խօսքը առանց գործի մեռել է», ըսած է յեղափոխական գործիչը:

Շատ գործելու եւ քիչ խօսելու պահն է այլեւս: Հայրենիքէն ներս թէ դուրս գործ ունինք ընելիք: Ամէն ոլորտի մէջ՝ ծրագրելու կարիք, ամէն ճակատներու վրայ մարտահրաւերներու դիմագրաման կամք՝ առանց ուշացումի:

Կենաց ու մահու կռիւի փուլ կ'ապրինք:

Զմանք ուրեմն համացանցի էջերուն վրայ խօսքեր եւ լոգուճկեր գրողներու դերին մէջ, գիրար յանդիմանելով ժամանակ չվատնենք, այլ կացութեան տերը դառնանք ու համագործակցինք ազգովին, եւ իւրաքանչիւրը իր լուծման թող դնէ մեր ազգի ու հայրենիքի գոյատեւման մարտին:

## ՍՐԲԱԶԱՆ ՀԱՅՐԸ ՀԻՐԸՆԿԱԼԵՑ ԳԱՄԱՍԿՈՍԷՆ ԺԱՄԱՆԱԾ ԳՈԿՏ. ՍԱՐԳԻՍ ՊՈՒՐՈՒՆՍՈՒԶԵԱՆԸ

Շաբաթ, 21 Հոկտեմբեր 2023-ին, երեկոյեան ժամը 6:00-ին, Բերիոյ Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Ս. Աստուածածին եկեղեցւոյ «Սուրենեան» դահլիճէն ներս ընդունեց Դամասկոսէն ժամանած թրքական հարցերու վերլուծաբան դոկտ. Սարգիս Պուրունսուզեանը, որ Հալէպ հրաւիրուած էր պետական համալսարանէն ներս Զրիստափոր Ուսանողական Միութեան կազմակերպութեամբ տեղի ունեցած «Հայկական Մշակութային Շաբթուան» առիթով դասախօսութեամբ հանդէս գալու:




Հանդիպումին ներկայ գտնուեցան նաեւ Ազգ. Վարչութեան ատենապետ մեթր Սունայուլ Սունայուլեան եւ Զրիստափոր Ուսանողական Միութեան անդամներ:

Մտերմիկ մթնոլորտի մէջ ընթացող հանդիպումին տեղի ունեցան ծանօթացում եւ ներկայ իրավիճակին առնչուող զանազան նիւթերու շուրջ կարծիքներու փոխանակում:

Սրբազան հայրը իր հայրական օրհնութիւնները տալով գնահատեց մշակութային շաբաթը կազմակերպող միութեան յոյժ կարեւոր նախաձեռնութիւնը եւ յաջողութիւն մաղթեց դասախօսին:

## ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Սօս Սարգսեան» հիմնադրամին, Համազգային հայ կրթական եւ մշակութային միութեան, «Առաջին հիփոթեքային ընկերութեան» հովանաւորութեամբ, Երեւանի «Լուսակն» հրատարակչութենէն լոյս ընծայուեցաւ Խորհրդային Միութեան ժողովրդական արուեստագետ Սօս Սարգսեանի նուիրուած «Նահապետ» ժողովածուն:



Գիրքը կազմեց եւ խմբագրեց Հայաստանի մշակոյթի վաստակաւոր գործիչ Սերգէյ Առաքելեան:

«Նահապետ»-ը կը բովանդակէ Սօս Սարգսեանի մասին հայ եւ օտար անուանի գործիչներու, արուեստագետներու, լրագրողներու վերլուծական յօդուածներ, կարծիքներ, հարցազրոյցներ, վաւերագիրներ եւ այլն:



## ԱՌՐԵԱՅ ՄՏՈՐՈՒՄՆԵՐ



Թային Մանուկեան

Աշխարհագրութեան քննութիւն ունիմ: Արդէն ուշացած եմ: Հասցնելով կը հագուիմ ու կը սուրամ դպրոց, ճամբան փորձելով մէկ-երկու բառ եւս վերաքաղ ընել:

Յուզուած եմ, վերջին քննութիւնն է ու այլեւս աշխարհագրութեան պահ պիտի չունենամ:

Յաճախ առաջարկած եմ ուսուցչուհիիս, որ ներկայ Հայաստանի ու Արցախի աշխարհագրութիւնը եւս դասաւանդուի մեզի, Պատմական Հայաստանի աշխարհագրութեան կողքին: Կը մտածեմ. արդեօք մինչեւ իրականացնեն առաջարկս պատմական Արցախի աշխարհագրութիւնը պիտի սորվիմ: Վերջին լուրերը սահմանեցուցիչ են: Արցախի հողերը յանձնե՞լ... Երեւակայութեանս մէջ կը պատկերուին 80-ական թուականները, մեր հերոսները ինչպէ՞ս կը մտնեն, արիւն թափեցին, նահատակուեցան այս սրբազան հողերը ազատագրելու համար: Ռուբէն Հախվերտեանի երգին բառերը կը մտաբերեմ «արիւնով ներկուել են բոլոր դաշտերը: Արիւնով ներկուել են բոլոր լեռները: Այդ արիւնն է ձեր՝ կռուող տղաներ, իր կարմիր գոյնով սարերը ներկել»: Այդքան բարձր գինով ազատագրուած հողերէն այսքան դիւրա՞ւ հրաժարիլ...:



Զաղաքականութեամբ բնաւ չեմ հետաքրքրուիր, չեմ հասկնար անոր խաղերը: Կը մտածեմ, թէ մենք այսքա՞ն դժբախտ ազգ ենք, բոլորս քաղաքականութենէ հեռու ենք: Ահաւոր է այս ցաւը, բառերը չեն կրնար գայն նկարագրել: Չեմ կրնար երեւակայել, թէ մարդիկ ինչպէ՞ս կրնան այսքան անտարբեր ըլլալ: Միթէ՞ հայու արիւն չկայ իրենց երակներուն մէջ. ո՞ր մնաց մեր արժանապատուութիւնը, հայրենասիրութիւնը: Զաղաքական գաւազան վերուճումներ կը լսեմ, միջազգային կարծիք, մարդկային իրաւունք, արդարութիւն... մեծ-մեծ բառեր կը տողանցեն մտքիս մէջ:

Մտածումներուս թելը կ'անջատուի ու կը վերադառնամ դասիս: Պետք է կեդրոնանամ ու գրել սկսիմ: Հարցարանը կ'առնեմ, հարցումները կը կարդամ ու կրկին կը սուրամ երեւակայութեանս մէջ: Այս անգամ Կիլիկեան թագաւորութեան սահմաններուն մէջ եմ: Թուղթին վրայ կ'արձանագրեմ արտաքին եւ տարանցիկ առեւտուրին յատկանշիչները: Կը հիանամ, թէ որքա՞ն հզօր երկիր ունեցած ենք, հարուստ տնտեսագիտութեամբ եւ առեւտուրով, երբ հսկայական մաքսային տուրքեր կը գանձէինք ու ժենովացի ու վենետիկցի վաճառականները մեզ մէ առանձնաշնորհումներ կը ստանային, որպէսզի Կիլիկիոյ մէջ իջեւաններ ու պահեստներ ունենան: Իսկ հիմա ո՞ր եմ այդ բոլորը, ինչո՞ւ այսքան խեղճացած ենք: Ինչո՞ւ միայն անցեալի փառքերով պիտի հիանանք ու չունենանք ներկայ մը, որով հպարտ զգանք: Ինչո՞ւ թափառական ու անապահով կեանք մը պիտի ապրինք:

Ուսուցչուհիիս ձայնը կը սթափեցնէ գիւ: Արդէն քննութեան աւարտին հասած ենք:

Գոհունակ սրտով կը յանձնեմ քննութեանս էջը: Ուրախ եմ, որ լաւ պատրաստած ու ներկայացուցած եմ քննութիւնս: Այո՞, ուրիշ աշխարհագրութեան պահ պիտի չունենամ, սակայն Սեւանայ լիճը, Գեղամայ լեռները, Կիլիկեան Տաւրոսը, բոլորը անխտիր իմ սրտին ու մտքին մէջ են: Խորապէս կը գիտակցիմ ուսուցչուհիիս խօսքին, երբ կ'ըսէ. «Հարեւանցի մի՛ անցնիք այս տեղեկութիւններուն վրայէն, ապրումով սորվեցէ՛ք զանոնք: Ասիկա լոկ դաս մը չէ, ասոնք մեր արժէքներն են»:

Ա՛խ, երանի կարենայինք ըսել մեր մնայուն արժէքներն են, ոչ թէ մեր անցեալի փառքերը:

Արդեօ՞ք պիտի գայ օր մը, երբ վերստին պիտի վերականգնենք մեր անցեալի փառքերը, պիտի կրնա՞նք վերադարձնել Արցախը: Յո՞ւշ թէ երազ պիտի մնան այս բոլորը: Արդեօ՞ք իմ չհասկցած քաղաքականութեան մէկ խաղը կը վերադարձնէ մեր հողերը, թէ անոնք առայւեւ կորած են այլեւս:

Անպատասխան հարցումներու շարան մը կը տողանցեմ մտքիս մէջ: Ներկայ իրավիճակը յուսատու չէ, սակայն կեանքին հանդէպ լաւատեսութիւնս եւ դրական մօտեցումս յուսահատութենէ զերծ կը պահեն գիւս: Հակասական զգացումներ կը պատեն հոգիս: Միթէ այս չէ՞ կեանքը՝ հակասութիւններու խառնուրդ մը...


Երազ ու խոհ, ցաւ ու ժպիտ ու տակաւին շատ բաներ...

Պիտի շարունակենք երազել, խոկալ, ցաւիլ, սակայն կեանքին ժպտիլ:



## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

### ՈՒԺԴ՝ ՄՏՔԻԴ ՈՒ ԲԱԶՈՒԿԻԴ ՄԷՋ



Շողեր Տէր Յովհաննեսեան

Որպէս 5-րդ կարգի պատանի, այս տարի ընկերներով մասնակցեցանք «Սիմոն Չաւարեան» բանակումին, որ մեր վերջին պատանեկան բանակումն էր:

Բանակումը կը կոչուէր «Սիմոն Չաւարեան»՝ Դաշնակցութեան խիղճը խորհրդակնոյց հիմնադիրին անունով, որպէսզի յիշատակած ըլլանք անոր մահուան 110-ամեակը:

Ինչպէս սովորութիւն դարձած էր տարեկան բանակումներուն, Սուրիոյ տարբեր շրջաններու պատանիներս կրկին համախմբուելով անցուցինք անհամբեր սպասուած բանակումը:



Իւրաքանչիւր օր օգտաշատ գիտելիքներով, յեղափոխական երգերով, զանազան նիւթերու շուրջ զրուցելով կ'ամբողջացնէինք, իսկ օրակարգը մեր պատմութենէն քաղուած դրուագներով, ապա խրախճանքով կը փակէինք՝ վերջիչելով ֆիտայիները, նահատակ ընկերները, որոնք իրենց կեանքը նուիրեցին հայրենիքի պաշտպանութեան:

Պատանեկան Միութիւնը՝ Դաշնակցութեան առաջին դպրոցը, մեր սերունդակիցները կը կերտէ իբրեւ հայրենասէր ու ընկերասէր մարդիկ: Միութիւնը իր դաստիարակչական ծրագիրով մեզ իրագրեց կը դարձնէ Հայոց պատմութեան, հայ ազատագրական շարժման, Հայաստանի աշխարհագրութեան, Սփիւռքի պատմութեան եւ կազմակերպ աշխատանքի հմտութիւններուն:

Մեր բանակումի շրջանին Արցախը շրջափակման մէջ էր: Թշնամին նետած էր ձեռնոցը, բայց վերցնող չունէինք: Տեղի ունեցաւ պատերազմն ու ցեղասպանութիւնը, յետոյ նաեւ՝ տեղահանութիւնը: Ամբողջ աշխարհը լուռ մեզ կը դիտէր:

Բայց ափսո՞ս. Աւետարանը կարդացուած էր:

Ճիշդ է, որ ներկայ պայմաններուն մէջ Սիմոն Չաւարեաններ, Արամ Մանուկեաններ չունեցանք, բայց բոլորս համախմբուելով կրնանք դառնալ մէկ բռունցք ու զիրար նեցուկ կանգնելով յարթահարել ներկայ իրավիճակը:

## «ԳԱՆՁԱՍԱՐ»

### ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ

Խմբագիր՝ Զարմիկ Զիւլպօշեան-Պօղիկեան  
Սրբագրիչ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Ձեւաւորող՝ Յովսէփ Զալօղլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Աւօ Պօղոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլպօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը երկուշաբթի օրերը:
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:

## ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



**Խոյ**  
Յառաջացող դժուարություններն դեմ ձեր պայքարը յաջողություն պիտի գտնեն: Դրական փոփոխություններ պիտի ունենաք ձեր կեանքին մեջ:



**Ցուլ**  
Հին խնդիրները պիտի լուծուին եւ բարեկամատ պայմաններ պիտի ունենաք: Յաջողությունը ձեր դուռը պիտի թակեն:



**Երկուորեակ**  
Ուշադրություն դարձուցե՛ք ձեր առողջության: Չարաչար մի՛ աշխատիք: Կարճ հանգիստ մը կազմուրիչ պիտի ըլլայ:



**Խեցգետին**  
Նոր գործի մը առաջարկը պիտի ընդունիք, որ պիտի իրականացնեն ձեր երազները: Ձեր անհատականությունը պիտի փաստեք շուրջիններուն:



**Առիւծ**  
Նոր բարեկամություն մը պիտի հաստատեք եւ անով հպարտանաք: Հարազատներու հետ հաճելի ժամանակ պիտի անցընէք:



**Կոյս**  
Մարդոց հետ ձեր փոխարարությունները գարգացուցե՛ք: Ընկերային կեանքը նոր շունչով պիտի օժտէ ձեզ: Լաւատես եղե՛ք:



**Կշիռք**  
Ձեր ընտանիքի անդամներուն ակտիվ հոգատարություն ցուցաբերեցե՛ք: Նիւթական գետնի վրայ մըսխումներ մի՛ կատարեք:



**Կարիճ**  
Լաւ յարաբերություններ մշակեցե՛ք ձեր գործընկերներուն հետ: Պաշտօնի բարձրացում մը պիտի ունենաք եւ անով հպարտանաք:



**Աղեղնաւոր**  
Ձեր կեանքին պայմանները գգալիօրէն պիտի բարելաւուին: Նիւթական պարզ եւ մը պիտի ստանաք հեռաւոր բարեկամէ մը:



**Այծեղջիւր**  
Այս շաբաթ յարմարություն պիտի ունենաք նոր գոյքեր գնելու կամ վերանորոգելու: Երկար յոգնութենէ ետք անհրաժեշտ է քիչ մըն ալ հանգստանալ:



**Ջրհոս**  
Գրաւիչ էք եւ ձեր գաղափարները՝ շինիչ: Ձեր ընկերները օգնություն կը սպասեն ձեզմէ: Մի՛ երկմտիք:




**Ձուկ**  
Նիւթական վիճակի բարելաւում եւ նպատակներու իրականացում կը սպասեն ձեզի: Բոլոր դժուարություններէն պիտի ձերբազատիք վերջապէս:



## ԱՌՅԱՆՑ ԾԱՐՏԱՐԱՎԳԻՏՈՒԹԻՒՆ

### WHATSAPP-Ը ԱՅՍՈՒՀԵՏԵՒ ՄԷԿ ԳՈՐԾԻՔԻ ՄԷՋ ԿՈՒՆԵՆԱՅ ԵՐԿՈՒ ՀԱՇԻՒ

WhatsApp մեքենանը ակտիվացած է գործառնոյթ մը, որ օգտատիրոջ առիթ կու տայ երկու հաշիւ ունենալ մէկ գործիքի մեջ: Այս թարմացումին մասին ընկերությունը յայտնած է իր *այլուկին* մեջ:  
«Այժմ դուք կրնաք միաժամանակ օգտագործել երկու WhatsApp հաշիւ, օրինակ՝ անձնական եւ աշխատանքային: Ասիկա կը նշանակէ, որ դուք այլեւս ստիպուած չէք ըլլար դուրս ելլել իւրաքանչիւր անգամ, երբ ձեր հաշիւը կը փոխուի», կ'ըսուի WhatsApp-ի *այլուկին* մեջ:  
Երկրորդ հաշիւ ստեղծելու համար դուք պետք է ունենաք բջիջային լրացուցիչ թիւ եւ SIM քարտ: WhatsApp-ը յայտնած է, որ գաղտնիութեան եւ ծանուցման կարգաւորումները կարելի է անհատապէս կազմել իւրաքանչիւր հաշիւի համար:  
WhatsApp-ը պարբերաբար կը հաղորդէ *մեքենանը* թարմացումները:



### X ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՅԱՆՅԸ ՄՏԱԴԻՐ Է ՅԱՌԱՋԻԿԱՅԻՆ ԿՃԱՐՈՎԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԳՈՐԾԱՐԿԵԼ

X հասարակական ցանցը, նախկին Twitter-ը, կը նախատեսէ ներդնել մէկ տարուան համար վճարովի բաժանորդագրություն բոլոր նոր օգտատիրոջն համար:



Ի պատասխան իր աղբիւրին վրայ հաստատուած վրայ *սփէսի* եւ *փոթորի* աշխուժութեան աճին, X հարթակը որոշած է ներդնել տարեկան 1 ամ. տոլար բաժանորդագրություն նոր օգտատիրոջն համար: Համակարգը արդէն կը փորձուի Ֆիլիպինի եւ Նոր Զելանտայի մեջ:

Այդուամենայնիւ, վճարումը շրջանցելու տարբերակ կայ: Անհրաժեշտ է բաժանորդագրուիլ Փրիմիւմ հաշիւին, որուն գինը ամսական 3,99 ամ. տոլար է: Անոնք, որոնք կը իրաժարին վճարման երկու տեսակներէն, կրնան միայն բովանդակություն կարդալ եւ բաժանորդագրուիլ այլ օգտատիրոջ:

X ընկերութեան ներկայացուցիչները կը յայտնեն, որ նման նախաձեռնութեան նպատակն է «գորացնել հակասփէսի միջոցները եւ նուազեցնել հարթակին վրայ փոթորի աշխուժությունը»:

## ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

### ԿՊՉՈՒՆ ՈՍՊՆԵԱԿՆԵՐՈՒ ԱՆԽՆԱՅ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՉՔԻ ԲՈՐԲՈՔՈՒՄ ԿՐՆԱՅ ՅԱՌԱՋԱՅՆԵԼ

Doctors.am-ը կը տեղեկացնէ, որ եղջերնաբորբը աչքի եղջերաթաղանթի (նուրբ մաշկի) հիւանդություն է, որ կ'ուղեկցի ցաւով եւ երբեմն կը յանգեցնէ կուրության: Եղջերնաբորբը կը յառաջանայ, երբ եղջերաթաղանթը կը վարակուի մանրէներով կամ սունկերով:



տարեկան 1.000.000 մարդ բժիշկի կը դիմէ:

Շարժական կաչուն նսպնեակները բաւական տարածուած բժշկական միջոցներ են, որոնք կը փոխարինեն ակնոցները: Միայն ԱՄՆ-ի մէջ կաչուն նսպնեակներ կը կրէ 38 մլն. մարդ: Սակայն նսպնեակները անխնայ պահելը կրնայ աչքի բորբոքում յառաջացնել:

Ըստ հիւանդություններու կառավարման կեդրոնի (CDC), ԱՄՆ-ի մէջ եղջերնաբորբի հիմնական պատճառներէն մէկը շարժական կաչուն նսպնեակներ կրելն է: Այս հարցով

քում նկատեք, անմիջապէս դիմեցե՛ք բժիշկին, յատկապէս, եթէ նսպնեակները ձեր աչքերուն մէջ են:

### ԻՆՉՊԷՍ ԽՆԱՄԵԼ ԿՊՉՈՒՆ ՈՍՊՆԵԱԿՆԵՐԸ

- Ձեռքերը օճառով լուացե՛ք եւ չորցուցե՛ք նախքան նսպնեակին դաչիլը:
- Ոսպնեակները հականեխիչ յատուկ հեղուկով լուացե՛ք իւրաքանչիւր օգտագործումէ առաջ:
- Հին ու նոր ոսպնեակները միաժամանակ մի՛ օգտագործեք: Եթէ գոյգ ոսպնեակներէն մէկը կորսնցուցած էք, նոր գոյգ մը գնեցե՛ք: Իրար մի՛ խառնեք նաեւ ոսպնեակը պահպանող տարբեր տեսակի հեղուկները:
- Երբե՛ք ջուրով կամ թուրով մի՛ խոնաւցնեք ոսպնեակները եւ գանոնք պարզ ջուրի մէջ մի՛ պահեք:
- Ոսպնեակները ջուրէն պահպանեցե՛ք. հանեցե՛ք լոգանքէն առաջ:

- Երեք ամիսը անգամ մը նոր գոյգ մը գնեցե՛ք:
- Այցելեցե՛ք ձեր ակնաբուծին ամուսնազն տարին մէկ անգամ, իսկ բարդություններու պարագային անյապաղ դիմեցե՛ք անոր:
- Եթէ ոսպնեակները կրելով ցաւ կամ տեսողութեան անյստակություն գգաք, կամ նոյնիսկ ձեր աչքերը կարմրին, հանեցե՛ք գանոնք եւ անպայման բժիշկին դիմեցե՛ք:
- Միշտ ձեռքի տակ ակնոց ունեցե՛ք, որպէսզի ոսպնեակը կամ ձեր աչքը վնասուելու պարագային գանոնք ակնոցով փոխարինեք:
- Կաչուն ոսպնեակները կրելով մի՛ քնանաք, այլ նախքան քնանալը հանեցե՛ք գանոնք:

## Մարզական



Ռաֆֆի Միլանեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

-Սուրիոյ պասքեթի դաշնութիւնը բեկանելով անդամական ընդհանուր ժողովէն բխած որոշումը յայտարարեց, որ 2023 - 2024 տարեշրջանի պասքեթի տղոց մրցաշարքի առաջին փուլը տեղի պիտի ունենայ առանց օտար խաղացողներու, եւ անոնց մասնակցութիւնը պիտի բաւարարուի միայն աւարտական քառեակի փուլով:

-Սուրիոյ ֆութպոլի հաւաքականը Միացեալ Էմիրութիւններու մէջ կատարած ուսումնամարզական հաւաքի ընթացքին բարեկամական հանդիպում մը ունեցաւ Զուէյթի կազմին հետ, որ վերջ գտաւ 2 - 1 արդիւնքով՝ ի նպաստ Զուէյթի: Սուրիոյ միակ կողմ նշակեց խմբապետ Օմար Սոման:



### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### TRANSFERMARKT-Ը ԱՇԽԱՐՀԻ ԱՄԵՆԱԹԱՆԿԱՐԺԵ ՖՈՒԹՊՈՒԼԻՍՏՆԵՐՈՒ ՅԱՆԿԸ ՅԱՅՏԱՐԱՐԵՑ

Վերջերս Transfermarkt-ի մասնագետները յայտարարած են եւրոպական գլխաւոր առաջնութիւններու որոշ ֆութպոլիստներու փոխադրական արժեքի տուեալները, նկատի առնելով հինգ գլխաւոր լիկաներ: Այսպիսով՝ աշխարհի ամենաթանկարժեք ֆութպոլիստները կը շարունակեն մնալ Մանչեսթըր Սիթիի յարձակող Էրլինկ Զոլանտը եւ Փարիզ սան Շերմանի մարզիկ Զիլիան Մպպիէ: Անոնց փոխադրութեան արժեքը հասած է



աւելի քան 180 միլիոն եւրոյի: Երրորդ եւ չորրորդ տեղերը կը գրաւեն Ռեալի երկու ֆութպոլիստները՝ Ծուտ Պելլիկիեմը եւ Վինսիպոս ժունիորը: Անոնց արժեքը 150 միլիոն եւրոյով սահմանուած է:

Աւելցնենք, որ առաջին 15 ֆութպոլիստներու փոխադրութեան արժեքը հասած է 100 միլիոն եւրոյի:

#### ՍՈՒՐԻՆԻՈ ԿԱՐՄԻՐ ԶԱՐՏՈՎ ԴԵՈՒՅՈՒՆԵՅԱՒ ՄՐՅՈՒՄԵՆ

Իտալիոյ Ռոմա խումբի փորձուկալցի մարզիչ Ժոզէ Սորիլիօն Մոնզա խումբին դէմ ընթացած մրցումին կարմիր քարտով հեռացուեցաւ խաղէն: Զանդիպուլմը ընթացաւ հաւասար արդիւնքով մինչեւ 99-րդ վայրկեանը, երբ Սթիվըն Շաարաուին յաջողեցաւ ցնցել մրցակիցին դարպասը, որմէ ետք Ռոմայի խաղացողները դիտմամբ փորձեցին ուշացնել գոլնդակին փոխանցումը, ինչ որ պատճառ դարձաւ մրցակից կազմի դժգոհութեան եւ վեճ մը յառաջացաւ կանաչ դաշտին վրայ: Ըստ հաղորդուած տեղեկութիւններուն, Սորիլիօն ուղղուելով մրցակից կազմի մարզիչին, ձեռքերով աչքերը շփեց եւ ըսաւ. «բաւարար է այսքան լաց ձեզի»: Այս արտայայտութենէն ետք իրաւարարը կարմիր քարտով դաշտէն հեռացուց փորձուկալցի մասնագետը: Վերջինս այս պատճառով պիտի բացակայի յառաջիկայ մրցումէն, որ տեղի պիտի ունենայ Ինթըր Միլանի հետ:



#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 461)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1				■					■			
2							■	■	■	■		
3		■		■			■		■		■	
4			■									■
5												
6		■				■			■	■	■	
7								■				■
8				■								■
9							■					
10	■					■				■		
11	■							■				
12				■			■					

#### Յորհոնական

- 1- Հայկական ծագում ունեցող օղանաւի մակնիշ: Չուարթութիւն: Դաշտ:
- 2- Արցախի առաջին դպրոցին վայրը: Էական բայ:
- 3- Աղբիւր:
- 4- Լեզուով մը՝ այր: Դրախտային:
- 5- Անձնական դերանուն: Հակառակ՝ գոյութիւն ունէր: Ամբարանոց:
- 6- Երգ: Հակառակ՝ 9001: Հակառակ՝ ցաւի ճիչ:
- 7- Հարուած: Կրկնուած բաղաձայններ:
- 8- Հակառակ՝ ափ: Պտղատու ծառի տեսակ:
- 9- Վայրի աղանի: Մարմինը՝ մեջքէն վեր, առանց թելերուն ու գլուխին:
- 10- Անձնական դերանուն: Հակառակ՝ իրերայաջորդ տառեր: Տառի մը հարեանները:
- 11- Ժողովրդային ասացածքը կ'ըսէ. «Անլի կերակուրին ճար կայ, անլի ճար չկայ»: Հակառակ՝ տարածքի միաւոր:
- 12- Սուրբ Հոգիի պտուղներէն: Եւս: Անձնական դերանուն:


#### Ուղղահայեաց

- 1- Լեռնային Ղարաբաղի շրջաններէն:
- 2- Հակառակ՝ արգելական: Անձնական դերանուն: Տառի մը անունը:
- 3- Կարասի: Կրկին: Յոգնակերտ մասնիկ:
- 4- Համացանցային ռատիօ: Հակառակ՝ աղէտի թել:
- 5- Գուրգուրանք:
- 6- Հակառակ՝ ձայնանիշ: Ժամանում: Հակառակ՝ գոյութիւն ունէր: Բալական լծորդութիւն:
- 7- Տարի: Սիամանթոյի ծննդավայրը:
- 8- Կամեցողութիւն: Պարգեւ, շնորհ:
- 9- Հակառակ՝ աղբիւր: Ծիւնել:
- 10- Շատ պաղ: Հակառակ՝ յարմար:
- 11- Տառի մը անունը: Ամենէն առաջ: Տիրան Զրաքեանի ծածկանունը:
- 12- Անատուի մորթէ պարկ: Հակառակ՝ խօսք: Մորթի բիծ:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 460)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	տ	ա	ր	ա	ր	ն	ա	կ	ե	լ	ր	
2	ր		ք	ի	ր	ն	ի					ա
3	ն	ն	ա	կ	ա	լ		ա		ա	ն	
4	ր	ն	լ			լ	ա		ի	ն	ա	
5	ե	հ		ն	ն			ա	ն	վ	ն	ա
6	լ	ե	գ	ն	ւ	ղ					լ	ա
7	մ	ա		ն		ա	ն	ա	կ			ր
8	մ		հ	ի	ա	ն	ա	լ	ի			
9	ա	ն	ն	ա	ւ	ե	ի	ի		ա	հ	
10	կ	ն	մ	ա		ք	ր	ն	ն	ց		ր
11	ա	ր		ն	ե	ր		ի	ր	ա		
12	ն	ա	ն		վ	ե	ր	ք	ա	կ	ե	ա

#### ԼՈՒՐԵՐ





## ՀԱԼՏԻ ՊԵՏԱԿԱՆ...

### Մկրտչի Էջ 1

Ռագի սրահեն ներս:

Ցուցահանդեսի հրավերալսելը համալսարանի բժշկական բաժնի հրապարակին մեջ դիմադրուեցան ՅՄԸՄ-ի փողերախումբին հնչեցուցած ազգային, հայրենասիրական երգերով:

Բացման արարողության ներկայ էին՝ Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Ս. Մակար Սրբ. Եպս. Ազգարեան, Բերիոյ կաթողիկէ հայոց առաջնորդի ներկայացուցիչ Տեր Կոմիտաս Ա. Զինյ. Տատաղլեան, Հայկի Պետական Համալսարանի նախագահ դրկտ. Մահեր Զարման, «Պասաս» կուսակցության համալսարանի բաժնի պետ դրկտ. Իպրահիմ ալ- Հատիտ, Սուրիոյ խորհրդարանի անդամներ, համալսարաններու տնօրէններ, թեմի Յարաբերական Մարմնի, Ազգ. Վարչութեան եւ միութիւններու ներկայացուցիչներ, ՅՄԸՄ-ի Կեդր. Վարչութեան ներկայացուցիչն ու տարբեր լրատուամիջոցներ:

Ցուցահանդեսին ներկայացուեցան հայ ժողովուրդի պատմութեան եւ մշակոյթին առնչուող

նիւթեր, հայկական երաժշտական գործիքներ, հայկական աստղազորութենէն օրինակներ, համաշխարհային համբաւ վայելող հայ դէմքեր, իսկ սահիկներով ցուցադրուեցան Հայաստանի ու արտերկրի տարբեր երկիրներու մէջ ապրող հայութեան մասին տեղեկութիւններ:

Ցուցահանդեսի բովանդակութեան ծանօթացումէն ետք, «Պասաս» կուսակցութեան պետը խօսք առնելով պարզեց հայութեան կարեւոր ներդրումը Սուրիոյ պատմութեան եւ զարգացման տարբեր փուլերուն, նաեւ տիպար քաղաքացիի իւրայատուկ մօտեցումը երկրին դիմադրուած այլազան դժուարութիւններուն մէջ:

Ցուցահանդեսէն ետք դրկտ. Սարգիս Պուրունսուզեան ներկայացուց դասախօսութիւն մը «Հայերը Սեւ Ծովի Ափերուն» խորագիրով:

Պուրունսուզեան նախ ներկայացուց Պատմական Հայաստանի մէջ հայերուն ընդհանուր ներկայութիւնը յայտնեց, որ հայերը Կոստանդնուպոլսոյ մէջ գործուն եւ վստահելի տարր էին: Ապա ներկայացուց Օսմանեան կայսրութեան օրերու վիճակը՝ լուսարձակի տակ առնելով Իսթանպուլի հայերուն մշակութային իւրայատկութիւնը,

տնտեսական կարողութիւնները, գիտական յայտնաբերումները, քաղաքական կեանքի մասնակցութիւնը եւ այլն:

Ապա ներկայացուց Համշէնի, Խրիմի եւ Աբխազիոյ հայերու կեանքի տարբեր երեսները:

Ցուցահանդեսը շարունակուեցաւ երկուշաբթի 23 եւ երեքշաբթի 24 Հոկտեմբերին, ժամը 11:00-15:30:

Երեքշաբթի, 24 Հոկտեմբերի 2023-ին, Հայկի Պետական Համալսարանի «Պասէլ» սրահէն ներս տեղի ունեցան «Հայկական Մշակութային Ծաթիւն» երրորդ օրուան հետեւեալ յայտագրերը:

Ա- «Արմատներ» խորագիրով թատերական ներկայացում մը:

Բ- Երգահանդես, մենակատարութեամբ երգիչ Վահէի, նուագակցութեամբ Համազգայնի Էստրատային նուագախումբին, որուն ընթացքին ներկայացուեցան շարք մը ազգային երգեր ու երաժշտական կտորներ:

Մշակութային շաբաթը առիթ հանդիսացաւ տեղացի հանրութիւնը ծանօթացնելու հայ մշակոյթին:

